Արձանագրություն N 3
ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՆՎ-25/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տրանսպորտային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.03.2025թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վահագն Մկրտչյան, Աննա Թումանյան, Սիլվա Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ.Խաչատրյան

1.Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Արպանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Կուտակիչ մարտկոցներ /ակումյատոր/	850000
2	Շարժիչի յուղեր	1035000
3	Շարժիչի յուղեր	920000
4	Ավտոմեքենաների անիվներ	580000
5	Ավտոմեքենաների անիվներ	1008000
6	Ավտոմեքենաների անիվներ	1020000
7	Ավտոմեքենաների անիվներ	288000
8	Ավտոմեքենաների անիվներ	160000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 26.03.2025թ.-ին ժամը 11:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 27.03.2025թ.-ին ժամը 11.00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.

Հ/հ	*Մասնակիցների անվանումները*	*Հասցեներ*
1	«Արպանիվ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 09209297, ք. Երևան, Նար-Դոս 122, automaxtender@mail.ru, հեռ. 091 20 56 24
2	«Հույս-Մոտոր» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00430814, ք. Երևան, Զավարյան 12, tender@lavavto.am, հեռ. 077044254
3	«ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ» Ա/Ձ	ՀՎՀՀ՝ 47874685, ք. Վեդի, Պուշկինի 50, Karaxanyan90@mail.ru, հեռ. 041464444
4	«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 08287363, ք. Երևան, Կիևյան փ. Շ 8, բն 62., sopranoarm@gmail.com, հեռ. 091575572
5	«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02294699, ք. Երևան, Բագրատունյաց 70/22, sag@krafthem.am, հեռ. 033026355
6	«ԺԱԿ ԵՎ ԳՈՌ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 03012667, Կոտայքի մարզ, ք.Հրազդան, կենտրոն թաղմ.,Շ 19, Բն. 40, , saturn90@mail.ru, հեռ. 091 333 711
7	«ՆԵՖՏԵՊՐՈՄ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02604031, ք. Երևան,կենտրոն Ագաթանգեղոսի փ., 7 շ., Բն. 59, nefteprom@mail.ru, հեռ. 091419211

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՆՎ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. *Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

Հնարավոր մասնակցի կողմից 17.03.2025թ-ի eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկվել է հարցում՝ հետևյալ բովանդակությամբ

«Հարգելի գործընկեր սույնով հայտնում եմ Ձեզ, որ սույն էլեկտրոնային աճուրդի պայմանագրի նախագծի հավելված 1-ի անվադողերի տեխնիկական բնութագրի՝ 4, 5, 6, 7 և 8-րդ չափաբաժիններում նշված է Երաշխիքային ժամկետը՝ պետք է լինի նվազագույնը 30 000 կմ կամ առնվազն 3 տարի, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ աշխարհում ոչ մի անվադող արտադրող գործարան նման երաշխիքներ չի տրամադրում, քանի որ երաշխիք տրամադրելու համար անհրաժեշտ է մի քանի հատակ պայմանների միաժամանակ առկայություն, որպեսզի արտադրողը՝ համապատասխանաբար նաև մատակարարը կարողանա երաշխիք սահմանի, նախ անհրաժեշտ է, որ արտադրողը իմանա տվյալ անվադողը որ երկրում է շահագործվելու, ճանապարհները որքանով են համապատասխանում միջազգային ստանդարտներին, ինչ ավտոմեքենայի վրա են շահագործվելու, մեքենայի տեխնիկական վիճակը և վերջապես վարորդը հմտությունները և վարման ոճը ինչպիսին է, ահա այս ինֆորմացիան հստակ արտադրողին տրամադրելուց հետո մի գուցե կկարողանա տրամադրել երաշխիք, որն էլ պետք է ունենա իր պայմանները, այսինքն մատակարարը պետք է կարողանա պարբերաբար վերահսկի անվադողերի ճիշտ շահագործման ընթացքը, ամեն դեպքում մեր կողմից մեր բոլոր մատակարարներին /որոնք հինգ տասնյակից ավել են/ տվյալ հարցը ուղել ենք և բոլորը պատասխանել են որ նրանք նման երաշխիք չեն սահմանում՝ շեշտելով մեր կողմից վերը հիշատակված հանգամանքները, որոնք պրակտիկայում իրագործելու համար անիրատեսական են: Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ պարզաբանել, թէ վերը նշված պահանջը որ օրենքով, կամ որոշումով է ներառվել գնման հայտի մեջ, քանի որ անվադողերի դեպքում դրանք կիրառելի չեն, ինչպես նաև խնդրում եմ հրավերում կատարել փոփոխություն և հանել այդ պահանջը, քանի որ տվյալ պահանջի առկայության դեպքում մասնակցությունը դառնում է անհնար» վերաբերյալ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված պարզաբանման վերաբերյալ

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Էլեկտրոնային աճուրդի https://eauction.armeps.am համակարգի միջոցով հնարավոր մասնակցից ստացված հարցումը ուղարկվել է պատասխանատու ստորաբաժանմանը՝ պարզաբանում տրամադրելու նպատակով:Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է հետևալ պարզաբանումը.

«Հայտարարված մրցութային գործընթացի ներկա փուլում անհրաժեշտ է բացառապես առաջնորդվել համապատասխան ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերով ներկայացված պահանջներով, իսկ տվյալ աճուրդի չկայանալու կամ կայանալու դեպքում՝ մատակարարման անհնարինության պարագայում Կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից կքննարկվի վերոգրյալ տեխնիկական բնութագրերում վերանայումներ կատարելու նպատակահարմարության հարցը՝ հիմքում ունենալով անորակ ապրանք ձեռք բերելու ռիսկերից խուսափելու գերակա նպատակադրումը»որը ուղարկվել է հնարավոր մասնակցին:

6. *Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

Չափաբաժնի համար	Չափաբաժնի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	Կուտակիչ մարտկոցներ /ակումյատոր/	Արպանիվ ՍՊԸ	850000	702708	20%	843249.6	450000	20%	540000.00	
1		Հոյս-Մոտոր ՍՊԸ		707303	20%	848763.6	512000	20%	614400.00	
1		ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ		80000000	0%	80000000	80000000	0%	80000000.00	Մերժված
1		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000.00	Մերժված
2	Շարժիչի յուղեր	«ԿՐԱՖՏՀԵՄՏԵ ԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ	1035000	861660	20%	1033992	700000	20%	840000.00	
2		ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ		861250	20%	1033500	710000	20%	852000.00	

2		ՆԵՖՏԵՊՐՈՄ ՍՊԸ		862500	20%	1035000	862500	20%	1035000.00	
2		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000.00	Մերժված
3	Շարժիչի յուղեր	«ԿՐԱՖՏՀԵՄՏԵ ԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ	920000	766000	20%	919200	600000	20%	720000.00	
3		ԺԱԿ ԵՎ ԳՈՌ ՍՊԸ		766250	20%	919500	630000	20%	756000.00	
3		ՆԵՖՏԵՊՐՈՄ ՍՊԸ		762500	20%	915000	762500	20%	915000.00	
3		Հույս-Մոտոր ՍՊԸ		766311	20%	919573.2	766311	20%	919573.20	
3		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000.00	Մերժված
4	Ավտոմեքենաների անիվներ	Հույս-Մոտոր ՍՊԸ	580000	483222	20%	579866.4	478000	20%	573600	
4		ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ		80000000	0%	80000000	80000000	0%	80000000	Մերժված
4		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000	Մերժված
5	Ավտոմեքենաների անիվներ	Հույս-Մոտոր ՍՊԸ	1008000	898555	20%	1078266	888000	20%	1065600	Մերժված
5		ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ		80000000	0%	80000000	80000000	0%	80000000	Մերժված
5		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000	Մերժված
6	Ավտոմեքենաների անիվներ	Հույս-Մոտոր ՍՊԸ	1020000	844155	20%	1012986	835000	20%	1002000	
6		ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ		80000000	0%	80000000	80000000	0%	80000000	Մերժված
6		ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ		500000000	20%	600000000	500000000	20%	600000000	Մերժված
7	Ավտոմեքենաների անիվներ	ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ	288000	80000000	0%	80000000	80000000	0%	80000000.00	Մերժված
8	Ավտոմեքենաների անիվներ	Հույս-Մոտոր ՍՊԸ	160000	132111	20%	158533.2	130000	20%	156000.00	
8		ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ		80000000	0%	80000000	80000000	0%	80000000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 27.03.2025թ.-ին համակարգի կողմից

- 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «**Արպանիվ» ՍՊԸ**-ն:
- 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ն:
- 4-րդ 6-րդ,8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «**Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ն:
- 5-րդ,7-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ չկան, քանի որ նախահաշվային գնից բարձր առաջարկների հետևանքով eauction.armeps.am համակարգի կողմից մասնակիցները մերժվել են:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ

7.1. Համակարգի կողմից 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները, Դիմում-հայտարարությունը չի համապատասխանում հրավերի ձևաչափին:

-Ներկայացված չէ հավելված 1.3-ը՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

-Ներկայացված չէ հրավերի հավելվածները էլեկտրոնային ստորագրելու վերաբերյալ լիազորագիրը՝ և լիազորված անձի անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

7.2. Համակարգի կողմից 4-րդ 6-րդ,8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

-Ներկայացված հավելված 1-ում (այսուհետ՝ Դիմում-հայտարարություն) լրացված չէ իրական շահառուի անուն ազգանունը և անձնագրի տվյալները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ԱՆՎ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 28.03.2025թվականին կասեցնել նիստը և ծանուցել **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ին, **«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին,** մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 04.04.2025թ. ժամը 14:30-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. 04.04.2025թ. ժամը 14:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 04.04.2025թ. ժամը 14:30-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **մասնակիցները** սահմանված ժամկետում ներկայացրել են շտկման ենթակա փաստաթղթերը, որոնք բավարարում են հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **«Արպանիվ» ՍՊԸ**-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:
2. **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ**-ի հայտը 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:
3. **«Հույս-Մոտոր» ՍՊԸ**-ի հայտը 4-րդ 6-րդ,8-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

04.04.2025թ. գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝

- 1-ին, չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Արպանիվ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:
- 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«ԿՐԱՖՏՀԵՄՏԵԽՆՈԼՈՋԻ» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

- 4-րդ 6-րդ,8-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ 1-ին, 2-րդ,3-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, չափաբաժինների մասով անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

10.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ընթացակարգի 5-րդ, 7-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

10.6 Հաստատել 5-րդ, 7-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Վահագն Մկրտչյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Ռուզաննա Խաչատրյան